ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 152

ք. Երևան 28.11.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 00481595, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Էրեբունի, Մուշական 8փ. 92տ) միջև 29.05.2023թ. կնքված N ՀՄԱՇՁԲ-23-10/7-1 գնման պայմանագրի և Պայմանագրին կից 18.03.2024թ. կնքված N 1 Համաձայնագրի և 19.06.2024թ. կնքված N 4 Փոփոխության շրջանակներում «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերությունը մինչև 2024թ. նոյեմբերի 30-ը պետք է կատարի 1,831,062,495 (մեկ միլիարդ ութ հարյուր երեսունմեկ միլիոն վաթսուներկու հազար չորս հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն սույն թվականի նոյեմբերի 14-ի դրությամբ Ընկերությունը չի կատարել 1,300,000,000 (մեկ միլիարդ երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամի աշխատանքներ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետը (կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. նոյեմբերի 18-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 1,300,000,000 (մեկ միլիարդ երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամի չափով չկատարված և 175,748,500 (հարյուր յոթանասունհինգ միլիոն յոթ հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով դեռևս չնախատեսված աշխատանքների մասով:

Հաշվի առնելով, որ «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ